



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2013

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 92

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ինչ լաւ է գոհութիւն մատուցանել քեզի, Տէր,
եւ ներբողել քու անունդ, ո՛վ Բարձրեալ:
Ամէն առաւօտ քու սէրդ պատմել,
եւ գիշերները հաւատարմութիւնդ հռչակել՝
տասնալար նուագարանով ու տաւիղով,
եւ քնարի նուագակցութեամբ:
Գործերովդ զիս ուրախացուցիր, ո՛վ Տէր,
ըրածներդ տեսնելով՝ ցնծութեամբ կ'երգեմ:
Ինչքան մեծ են գործերդ, Տէր,
ինչքան խորունկ են քու խորհուրդներդ:
Արդարները պիտի ծաղկին արմաւենիի նման,
պիտի աճին Լիբանանի մայրիներու պէս:
Տիրոջ տան մէջ պիտի տնկուին,
մեր Աստուծոյն տանարին մէջ պիտի բուսնին:
Նոյնիսկ ծերանալէ ետք պտուղ պիտի տան,
պիտի մնան կորովալից ու մշտաթարմ,
որպէս վկայութիւն՝ թէ ուղիղ է Տէրը, իմ Վեմս,
եւ անոր քով անարդարութիւն չկայ:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԿՆ ՆԻԹԸ
ԾՆՆԴՈՑ 21 ԳԼԵ

ԻՍԱՀԱԿԻ ԾՆՈՒՆԴԸ (21:1-8)

Աստուծոյ խոստումն է որ կը կատարուի, ոչ պարզապէս զաւակ մը շնորհելու իմաստով իբրեւ ժառանգորդ, այլ անոր ճամբով բոլոր ազգերը օրհնուելու, որուն լրումն ու կատարումն է Յիսուս Քրիստոս:

Այդ զաւակն անունը Իսահակ դրաւ, որ կը նշանակէ խնդութիւն, ուրախութիւն, այդ խնդութիւնը ոչ միայն Սառային, այլ նաեւ բոլոր անոնց որոնք պիտի լսեն այդ լուրը: «Աստուած զիս խնդացուց եւ ամէն լսող ինծի հետ պիտի խնդայ» (21:6): Նոյն այս ուրախութեան աւերիսը պիտի փայլին հրեշտակը հովիւներուն. «Մի՛ վախճաք, ձեզի աւերիս մը պիտի փամ, որ ամբողջ ժողովուրդին մեծ ուրախութիւն պիտի պարճառէ» (Դուկ 2:10):

«Տղան մեծցաւ ու կաթն կտրուեցաւ եւ Աբրահամ մեծ խնձոյք ըրաւ» (21:8): Այսքան կարեւոր է կաթն կտրուիլը: Պօղոս Առաքեալ պիտի ըսէ. «Կաթ ջամբեցի ձեզի եւ ոչ թէ կերակուր, որովհետեւ չէիք կրնար ուրել» (Ա Կորնթ 3:2): Ուրեմն կաթն կտրուիլը կը նշանակէ երեխայութենէն պարանկութեան անցնիլ, կարծր ուրելիք ուրել: Հոգեւոր կեանքին մէջ եւս երեխայութենէն պարանկութեան անցնիլ: Կը նշանակէ մեծնալ ու աճիլ յոյսի ու հաւաքի մէջ ի Քրիստոս: Ահա այս մեծնալուն մէջ Աբրահամ կը փեսնէր զալիքը եւ ասով կ'ուրախանար: Իսկ մենք որքանով կ'աճին հոգեւոր մեր կեանքին մէջ, ուրախութիւն պարճառելու մեր ծնողքին՝ Եկեղեցիին:

ՀԱԳԱՐ ԵՒ ԻՍՄԱՅԷԼ ԿԸ ՀԵՌԱՅՈՒԻՆ (21:9-21)

Այս հատուածը քիչիկ մը փարօրինակ է, ու ինչպէս կարելի է արդարացնել եղածը, եթէ երբեք բառացի կամ փառացի փորձենք հասկնալ զայն: Բայց երբ Պօղոս Առաքեալի Գաղատացիներուն ուղղուած նամակը կարդանք նոյնինքն այս հատուածին կապուած հետաքրքրականօրէն զայն կը կապէ մարմնի եւ հոգիի միջեւ եղած կապին:

Մի գուցէ հատուածը ինք չի խօսիր այդ մասին, բայց ըստ երեւոյթին Սառան բան մը փեսած էր, որուն համար ալ Աստուած հաւանութիւնը կու փայ ըսելով Աբրահամին. «Սառային խօսքը մտիկ ըրէ»: Կարծէք թէ լռելեան Իսմայէլ մօրը՝ Հազարի նկարագիրը ունէր: Ինչպէս Հազար կը ծիծաղէր Սառայի վրայ, Իսմայէլ Իսահակի վրայ, իսկ խորհրդանշականօրէն մարմինը հոգիին վրայ: Տակաւին Պօղոս պիտի աւելցնէ ըսելով. «Ինչպէս այն աստի մարդկային մտահոգութիւններէն ծնածը կը հալածէր Սուրբ Հոգիին խոստումով ծնածը, այնպէս կ'ըլլայ նաեւ հիմա» (Գաղ 4:29): Ուստի, այս իսկ պարճառով կարելի չէ որ մարմնաւոր ժառանգորդ դառնայ, որովհետեւ «մարմինն ու արիւնը իրենց ներկայ վիճակով չեն կրնար Աստուծոյ արքայութիւնը ժառանգել» (Ա Կորնթ 15:50), պէտք է որ վերստին ծնիլ «ջուրէն եւ Հոգիէն» որպէսզի յաւիտենական կեանքը ժառանգենք (Յովհ 3:5):

Եթէ երբեք Սառան նկարի առնենք որպէս առաքինութիւնը, Իսմայէլը՝ մարմինը, իսկ Իսահակը՝ հոգին, ուրեմն առաքինութիւնը միշտ կ'ուզէ որ մարմնական ցանկութիւնները հեռանան հոգիէն, որպէսզի կարենայ հոգին ժառանգել: Միւս կողմէ, թէեւ մեր հայեացքով փարօրինակ կը հնչէ եղածը, սակայն Աստուծոյ համար չէ, որովհետեւ Աստուած կը թելադրէ Աբրահամին որպէսզի Սառայի խօսքերը մտիկ ընէ, որովհետեւ Սառա յանձն առած էր այնպիսի բաներ, որոնք Աբրահամը ոչ միայն փրկեց մահէ, այլ նաեւ ինչքերով հարստացուց:

Աբրահամի համար քիչիկ մը դժուար էր այս երեւոյթը ընդունիլ, որովհետեւ վերջ ի վերջոյ իր զաւակն էր: Բայց երբ այս հատուածը հոգեւոր իմաստով կ'առնենք կը նշանակէ, թէ յաճախ մեր կեանքերուն մէջ բաներ կրնան պարզուիլ, որոնք սակայն հակառակ են մեր հոգեւոր աճման, ուրեմն պէտք է հեռացնել զանոնք, դուրս դնել մեր կեանքէն: Այդ դժուար կ'ըլլայ ընդունիլը, մանաւանդ երբ զգացական կը մօտենանք երեւոյթին, որովհետեւ նաեւ մեր զգայարանները կրնան արգելք ըլլալ այդ քայլը առնելու: Որովհետեւ մեղանշական բնութիւնը Սուրբ Հոգիին ցանկացածին հակառակն է որ կը ցանկայ, իսկ Սուրբ Հոգին՝ մեղանշական բնութեան ցանկացածին հակառակը: Բայց Տէրը ինք զիտ թէ ինչ կը թելադրէ:

Աստուած փակաւին ցոյց կու փայ իր հոգաւորութիւնը եւ կը խոստանայ որ ազգ մը պիտի ընէ: Աբրահամ իր աղախինքին հաց ու փիկ մը ջուր կու փայ ու կը ճամբէ: Հետաքրքրականօրէն ուրիշ բան չրուաւ: Տիկ մը ջուր եւ ոչ թէ ջրհոր: Հազար ի վիճակի չէ ջրհոր ունենալու, իսկ Իսմայէլն ալ ի վիճակի չէ ջրհորէն ջուր քաշելու: Իրենց փրուած փիկ մը ջուրն ալ ամբողջութեամբ ջրաւարարեց, այլ՝ ջուրով սպառեցաւ: Մինչեւ իսկ Հազար փղան մացառներուն մէջ դրաւ որպէսզի անոր մահը չփեսնէ, որովհետեւ ալ ջուր չկար: Օրէնքն ալ կրնայ մասամբ մը մեր ծարաւը հագեցնել, բայց ոչ ամբողջական: Ամբողջութեամբ մեր ծարաւը հագեցնելու համար պէտք է դիմենք Աստուծոյ որպէսզի փայ մեզի այն կենդանի ջուրը ինչ որ խոստացաւ փայ Սամարացի կնոջ: Ահա երբ Հազար լացաւ Տէրը լսեց փղուն ձայնը եւ օգնութեան հասաւ, ու մանաւանդ Տէրը Հազարի աչքերը բացաւ, որպէսզի ջրհորը փեսնէ ու անկէ ջուր քաշէ խմելու եւ փղուն խմցնելու:

Բայց Ամովսի մարգարէութեան մէջ Տէրը կ'ըսէ. «Ահա օրեր կու գան, երբ երկրի վրայ սով մը պիտի դրկեմ, ո՛չ թէ հացի սով եւ ո՛չ թէ ջուրի ծարաւ, այլ Տիրոջ խօսքերը լսելու սովը» (Ամովս 8:11): Ահա որքանով պարզապէս ենք լսելու Աստուծոյ խօսքը մեր քաղցն ու ծարաւը հագեցնելու: